https://doi.org/10.46991/hc.2022.18.2.94

The Coverage of the Issue on "The Full Knights of Glory Order of Other Nationalities Born or Having Lived and Worked in Armenia before the War" in Armenian Historiography

Volodya Gasparyan
https://orcid.org/0000-0003-4525-8040
Candidate of Pedagogical Sciences, Researcher at the Institute of Armenian Studies of YSU
gavolodya@yahoo.com

Key words: war, army, historiography, Armenia, anti-fascism, saboteur, hero of Soviet Union, Glory Order knight.

Armenian people has had an active participation in the Second World War and in the Great Patriotic War and had its great contribution to the Victory against Fascism - the enemy of humanity.

More than 600 000 Armenians participated in the War, 200 000 of them passed away in the front line. 106 Armenian soldiers were awarded with the highest title of the Hero of the Soviet Union (it should be mentioned, that Azerbaijan had 43 heroes, which were mainly Kurds, Talyshs, Tatars). 26 Armenian soldiers were awarded with three degrees of Glory Order and became full knights of the Glory Order, the status of which was equal to the status of the Hero of the Soviet Union.

10 soldiers of other nationalities were also awarded with the title of the Hero of the Soviet Union, who were born or had lived and worked in Armenia before the War (5 Russians, 1 Ukrainian, Greek, Assyrian, Kurdish and Azerbaijani).

Since, different statistics on the number of the Full Knights of Glory Order have been mentioned up till now we tried to find out about it in our article. That will definitely support the tutors at schools, military institutions, and higher education institutions in their daily work and according to us, will contribute to the important task of military-patriotic upbringing of the younger generation.

Խորհրդային միության՝ հայ, Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմն այնտեղ ապրած և այլազգի հերոսների ու «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների հիմնահարցի լուսաբանումը հայ պատմագրության մեջ

Վոլոդյա Գասպարյան
մանկ.գ.թ., ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտական աշխատող

Հիմնաբառեր՝ Խորհրդային Միության, պատերազմ, բանակ, պատմագրություն, հայ,

History and Culture. Journal of Armenian Studies, Vol.-2(18), 2022, pp. 94-104
Received: 30.09.2022
Revised: 11.11.2022
Accepted: 25.12.2022

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.
© The Author(s) 2022

հակաֆաշիստական, դիվերսանտ, «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ:

Հայ ժողովուրդն ակտիվորեն մասնակցել է Երկրորդ համաշխարհային ու Հայրենական մեծ պատերազմներին՝ իր արժանի ավանդը ներդնելով մարդկության ոխերիմ թշնամի ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում: Մարտերին մասնակցել է ավելի քան 600 հազար հայ, որոնցից 200 հազարը զոհվել է ռազմաճակատում: Նրանցից 106-ը արժանացել է «Խորհրդային Միության հերոս» բարձրագույն կոչման, (համեմատության կարգով նշենք, որ ադրբեջանցիները տվել են 43 հերոս, որոնց մի մասը՝ լեռնային հրեաներ, քրդեր, թալիշներ, թաթարներ) 26-ը, պարգևատրվելով «Փառքի շքանշանի» երեք աստիճաններով, դարձավ այդ շքանշանի լրիվ ասպետ, որի կարգավիճակը հավասարեցված է «Խորհրդային Միության հերոս» կոչմանը: «Խորհրդային Միության հերոս» կոչումը շնորհվեց նաև Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմն ապրած ու աշխատած 10 այլազգիների (5 ռուս, մեկական ուկրաինացի, հույն, ասորի, քուրդ ու ադրբեջանցի): Քանի որ մինչ օրս հայ պատմագրության մեջ հերոսների ու «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների թվի վերաբերյալ բերվում էին տարբեր թվեր, մենք մեր հոդվածում փորձեցինք ճշտել այն: Դա, անշուշտ, կօգնի դպրոցների, բուհերի ու ռազմական համալսարանների դասախոսներին իրենց առօրյա աշխատանքում ու մատաղ սերնդի ռազմահայրենասիրական ոգով դաստիարակելու կարևոր գործին:

Освещение вопроса «Полные кавалеры ордена Славы других национальностей, родившиеся или жившие и работавшие в Армении до войны» в армянской историографии

Володя Гаспарян
Кандидат педагогических наук, научный сотрудник Института арменоведения ЕГУ

Ключевые слова: война, армия, историография, Армения, антифашизм, диверсант, Герой Советского Союза, кавалер ордена Славы.

Армянский народ активно участвовал во Второй мировой войне и в Великой Отечественной войне и внес свой большой вклад в Победу над фашизмом, врагом человечества.

В войне участвовало более 600 000 армян, 200 000 из которых погибли на передовой. 106 воинов-армян были удостоены высшего звания Героя Советского Союза (надо отметить, что в Азербайджане было 43 героя, в основном курды, талыши, татары). 26 армянских воинов, награжденных тремя степенями ордена Славы, стали полными кавалерами ордена Славы, статус которого был приравнен к званию Героя Советского Союза.

Звания Героя Советского Союза также удостоены 10 военнослужащих других национальностей, которые родились или жили и работали в Армении до войны (5 русских, 1 украинец, грек, ассирийец, курд и азербайджанец).

Поскольку до сих пор приводилась разная статистика о количестве полных кавалеров ордена Славы, мы попытались выяснить это в нашей статье. Это, безусловно, поможет преподавателям школ, военных институтов и вузов в их повседневной работе и, на наш взгляд,

будет способствовать решению важной задачи военно-патриотического воспитания подрастающего поколения.

* * *

Ներածություն: Հայ ժողովրդի զավակները ակտիվորեն մասնակցել են Երկրորդ համաշխարհային (1.09.1939-2.09.1945) և նրա բաղկացուցիչ մասը կազմող Խորհրդային Միության Հայրենական մեծ (22.06.1941-9.05.1945) պատերազմներին: Աշխարհի առաջադեմ ուժերի ու մարդկության ոխերիմ թշնամի ֆաշիզմի դեմ մղված պայքարը ավարտվեց հակաֆաշիստական դաշնակից երկրների (Անգլիա, Ֆրանսիա, ԱՄՆ, ԽՍՀՄ, Չինաստան, Կանադա և այլ երկրներ)՝ ֆաշիստական բլոկի երկրների (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա և այլ երկրներ) դեմ տարած հաղթանակով: Երկրորդ համաշխարհային պատերազմը մարդկային պատմության մեջ ամենարյունահեղ պատերազմն էր, որին զոհ գնաց ավելի քան 50 միլիոն մարդ, որից 20 միլիոնը (որոշ տվյալներով՝ 27 միլիոն)՝ միայն Խորհրդային Միությունից (Вторая мировая война. Итоги и уроки, 1985, 212-213): Չնայած պատերազմական գործողությունները տեղի էին ունենում Խորհրդային Հայաստանի սահմաններից հեռու, բայց և այնպես հայ ժողովուրդը ակտիվ մասնակցություն ունեցավ պատերազմին՝ ռազմաճակատ ուղարկելով շուրջ 600 հազար մարդ (300 հազարը՝ Խորհրդային Հայաստանից, 200 հազարը՝ ԽՍՀՄ այլ հանրապետություններից, 100 հազարը՝ աշխարհի մյուս պետություններից): Այդ պատերազում զոհվեց ավելի քան 200 հազար հայ (Арутюнян, 2004, 742): Այդ պատերազմում տարած հաղթանակը առաջադեմ մարդկությանը փրկեց ֆաշիստական ստրկացումից, իսկ հայ ժողովրդին՝ մի նոր ահավոր ցեղասպանությունից: Ինչպես գիտենք, Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան Թուրքիայի կառավարությունը կայսերական Գերմանիայի թույլտվությամբ Արևմտյան Հայաստանում իրականացրեց ծրագրված ցեղասպանություն, որի հետևանքով ոչ միայն Արևմտյան Հայաստանում թուրքական յաթաղանի զոհ գնացին ավելի քան 1.5 միլիոն հայեր, և հարյուր հազարավոր հայեր էլ եղեռնից մազապուրծ սփռվեցին աշխարհով մեկ, այլև հայերի մի քանի հազարամյա բնօրրանը հայրենազրկվեց (Հայոց պատմություն, 2015, 493):

Երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին շրջանում ֆաշիստական Գերմանիայի փաստացի դաշնակից Թուրքիան Խորհրդային Հայաստանի սահմանների մոտ էր կուտակել 26 սպառազեն դիվիզիա և հարմար պահի էր սպասում՝ այնտեղ ներխուժելու ու նոր սպանդ իրականացնելու նպատակով: Սակայն Ստալինգրադյան ճակատամարտում Կարմիր բանակի տարած հաղթանակը ստիպեց թուրքերին Հայաստանի սահմաններից ետ մղել իրենց զորքերը: Ուստի պատահական չէր, որ ռազմաճակատում կռվող հայերը մարտնչում էին անձնվիրաբար՝ գիտակցելով, որ ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակը հաղթանակ է նաև նրա դաշնակից Թուրքիայի դեմ: Հայերի մասնակցությունը պատերազմին դրսևորվեց ոչ միայն գործող բանակ 600 հազար մարդ ուղարկելով, այլև ռազմի դաշտում ցուցաբերած հերոսությամբ:

ԽՍՀՄ հայ հերոսները: Այսպես, օրինակ, ըստ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր կադրերի վարչության պարգևատրման բաժնի 1947 թ. նոյեմբերի 1-

ի տվյալների՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին մարտական շքանշաններով ու մեդալներով (խոսքը «Արիության համար», «Մարտական ծառայությունների համար», Ուշակովի ու Նախիմովի մեդալների մասին է) պարգևատրվել է 9 284 199 մարդ, որոնց թվում՝ ռուսներ՝ 6 172 976, ուկրաինացիներ՝ 1 710 766, բելառուսներ՝ 311 105, թաթարներ՝ 174 886, հրեաներ՝ 160 772, ղազախներ՝ 90 638, ուզբեկներ՝ 80 013, հայեր՝ 66 802, վրացիներ՝ 49 106, ադրբեջանցիներ՝ 36 180 մարդ և այլն (Красная Звезда, 28.3.1967): Ըստ մեկ այլ աղբյուրի՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին «Խորհրդային Միության հերոս» կոչումը շնորհվել է շուրջ 11635 մարդու, որից ռուսներ՝ 8182, ուկրաինացիներ՝ 2072, բելառուսներ՝ 311, թաթարներ՝ 161, հրեաներ՝ 108, ղազախներ՝ 96, վրացիներ՝ 91, հայեր՝90, ուզբեկներ՝ 69, մորդվիններ՝ 61, չուվաշներ՝ 44, ադրբեջանցիներ՝ 43 և այլն (Герои Советского Союза. Историко-статистический очерк, 1984, 245): Իրականում հայ հերոսների թիվն ավելի շատ է, քանի որ վերևում նշված 91 վրացիներից երկուսը իրականում ազգությամբ հայ են՝ Սուրեն Արտեմի Ասլամազաշվիլի (Ասլամազյան) և Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլի (Գալստյան) (Գիրք հերոսների մասին, 1964, 363-366, 440-442): 1964 թ. ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի կողմից հրատարակված «Գիրք հերոսների մասին» աշխատության մեջ «Խորհրդային Միության հերոս» կոչման արժանացած հայերի թիվը նշված է 95, իսկ Հայաստանում ծնված այլազգի հերոսների թիվը՝ 5 (Գիրք հերոսների մասին, 1964, 11):

1975 թ. ՀՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս ընծայեց ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի, ՀՍՍՀ մինիստրների սովետին կից արխիվային վարչության և Հայաստանի կոմկուսի կենտկոմի կուսակցության պատմության ինստիտուտի աշխատակիցների կազմած «Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945)» փաստաթղթերի ու նյութերի ժողովածուն (ռուսերեն), որտեղ Խորհրդային Միության հերոս հայերի թիվը նշված է 96, իսկ Հայաստանում ծնված այլազգի հերոսների թիվը՝ 6 (Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сборник документов и материалов, 1975, 634-636): Ի տարբերություն «Գիրք հերոսների մասին» աշխատության, որում չեն նշվել «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ հայ զինվորների անունները, այս ժողովածուում բերված է նրանց ցուցակը, որում ընդգրկված են 27 հայ զինվորի անուն-ազգանուններն ու հայրանունները (Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945). Сборник документов и материалов, 1975, 637): Ռուսերեն լույս ընծայվեց ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակիցների կազմած նոր, լրամշակված «Գիրք հերոսների մասին» աշխատությունը, որտեղ Խորհրդային Միության հայ հերոսների թիվը նշված է 100, իսկ Հայաստանի զավակ և այլազգի հերոսների թիվը՝ 8 (Книга о Героях, 1985, 6):

Ի տարբերություն 1964 թ. լույս տեսած «Գիրք հերոսների մասին» աշխատության՝ ռուսերեն հրատարակության մեջ տրված էին նաև «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ 27 հայ ռազմիկների անուն-ազգանունները, հայրանունները: Թվում է, թե այդքանով կավարտվեր հայ հերոսների ու «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների թվաքանակի ճշտման հարցը: Սակայն հայ պատմաբանների հետագա պրպտումները տվեցին նոր արդյունքներ: Այսպես, օրինակ, 2004 թ. ՀՀ ԳԱ «Գիտություն» հրատարակչության կողմից լույս տեսած «Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союз (1941-1945)» ստվարածավալ (866-էջանոց) մենագրության մեջ հեղինակը՝ պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանը, ցույց է տալիս, որ Խորհրդային Միության հայ հերոսների թիվը եղել է 106:

The Coverage of the Issue on "The Full Knights of Glory Order of Other Nationalities Born or Having Lived dnd Worked in Armenia before the War" in Armenian Historiography

Խորհրդային միության՝ հայ, Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմն այնտեղ ապրած և այլազգի հերոսների ու «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների հիմնահարցի լուսաբանումը հայ պատմագրության մեջ

Չորս հայեր «Խորհրդային Միության հերոս» կոչմանն են արժանացել Խորհրդաֆիննական պատերազմում (30.11.1939-13.03.1940), 99-ը՝ Հայրենական մեծ պատերազմում (22.06.1941-9.05.1945), իսկ 3-ը՝ հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար: Կ. Հարությունյանի նշված աշխատության մեջ մինչև պատերազմը Հայաստանում ծնված կամ աշխատած այլազգի հերոսների թիվը ոչ թե 8 է, այլ՝ 10, իսկ «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների թիվը ոչ թե 27, այլ՝ 26 (Арутюнян, 2004, 748-843): Կ. Հարությունյանը, որը 40 տարի շարունակ գիտահետազոտական գործունեություն է ծավալել ԽՍՀՄ, ապա՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում (Մոսկվայի մարզ, ք. Պոդոլսկ), իր բերած թվերը հաստատում է այդ արխիվից վերցված պաշտոնական փաստերով, թվարկում հայ հերոսների ու «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների, Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմն ապրած այլազգի հերոսների անունները, առանձին աղյուսակներով տալիս նրանց կենսագրությունները լուսաբանող հավաստի ու բնութագրող տվյալներ:

Կ. Հարությունյանը Խորհրդային Միության հայ, Հայաստանի զավակ, այլազգի հերոսների և «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ հայորդիների վերաբերյալ թվական այդ փաստերը տալիս է նաև 2010 և 2017 թթ. հրատարակած աշխատություններում (Арутюнян, Погосян, 2010, 841-849; Հարությունյան, 2017, 7-8):

1975 թ. «Հայաստան» հրատարակչությունում լույս տեսած «Միասնական շարքերում» գրքի հեղինակը՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արամայիս Մնացականյանը, Խորհրդային Միության հայ հերոսների թիվը 104 է նշում, իսկ «Փառքի շքանշանի» լրիվ հայ ասպետների թիվը՝ 27 (Մնացականյան, 1975, 446-450): Հերոսների նույն թվերն են բերված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խիկար Բարսեղյանի «Հայրենական մեծ պատերազմի սովետահայ պատմագրությունը» աշխատությունում, սակայն «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների թիվը տրված է 25 (Բարսեղյան, 1975, 7): Խորհրդային Միության հայ հերոսների թիվը պատմական գիտությունների թեկնածու Երվանդ Խալեյանը նշում է 103 (Աղայան, Խալեյան, 1960, 309):

Հայ պատմաբաններից «Փառքի շքանշանի» լրիվ հայ ասպետների հիմնահարցի վերաբերյալ առանձին աշխատություն գրած պատմական գիտությունների դոկտորներ Հովիկ Մելիքսեթյանն ու Մարատ Սահակյանը այդ շքանշանի բոլոր երեք աստիճաններով պարգևատրված հայերի թիվը նշում են 27: Նրանք ոչ միայն նշում են այդ խիզախների անունները, այլև մեկառ մեկ ընթերցողներին ծանոթացնում «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների կյանքին ու մարտական ուղուն, նրանց հետագա ճակատագրին (Մելիքսեթյան, Սահակյան, 1982, 120):

Գրիշա Հարությունյանը Խորհրդային Միության հայ հերոսների թիվը նշում է 108, իսկ «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների թիվը՝ 27 (Հարությունյան, 2002, 95):

Համեմատելով հիմնահարցով լրջորեն զբաղված հայ պատմաբանների տեսակետները Խորհրդային Միության հայ հերոսների ու «Փառքի շքաշանի» լրիվ ասպետների թվի վերաբերյալ՝ փորձենք վերլուծել դրանք ու բացահայտել իրականությանը

համապատասխանող փաստերը: Հիմք ընդունելով պատմական գիտությունների դոկտոր Կլիմենտ Հարությունյանի՝ վերջին 40 տարիներին իրականացրած ուսումնասիրությունը ԽՍՀՄ, ապա՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում, նաև այդ արխիվի նյութերի հիման վրա շարադրված նրա աշխատությունները, որտեղ Խորհրդային Միության հայ հերոսների թիվը, ինչպես նշեցինք, 106-ն է, իսկ «Փառքի շքանշանի» հայ լրիվ ասպետների թիվը՝ 26 (Арутюнян., 2004, 748-843), տեսնենք, թե նա ինչպես է ստացել այդ թվերը, ինչպես է հիմնավորում դրանք: Նախ նշենք, որ Կ. Հարությունյանն իր աշխատություններում տալիս է Խորհրդային Միության բոլոր 106 հերոսների ոչ միայն անուն-ազգանունները, հայրանունները, այլև նրանց ծննդյան թվականը, ծննդավայրը, զինվորների կոչումն ու պաշտոնում սխրանք կատարելու ժամանակն ու վայրը, պարգևատրման հրամանագիրը, հետագա ճակատագիրը և այլ տեղեկատվություն:

106 հերոսներից 4-ը՝ Կարապետ Սիմոնի Սիմոնյանը, Միքայել Արտեմի Պարսեղովը, Գրիգոր Միքայելի Հայրապետյանն ու Իսահակ Մարկոսի Մանասյանը, իրենց կոչումը ստացել են 1939-1940 թթ. խորհրդաֆիննական, 99-ը՝ Հայրենական մեծ պատերազմում կայացած սխրանքների համար այդ հերոսների անունները առանձին աղբյուրով տրված է Կ. Հարությունյանի (Участие армянцкого народа Великой Отечественной войне (1941-1945),2010, 52-107): Երեք հերոսներ՝ Էդուարդ Վահանի Յոլյանը, Արթուր Նիկոլայի Չիլինգարովը և Գուրգեն Ռուբենի Կարապետյանը, այդ բարձր կոչմանը արժանացել են հետպատերազմյան շրջանում կատարած սխրանքների համար:

Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքների համար Խորհրդային Միության հերոսների ցուցակում Կ. Հարությունյանն ավելացրել է Անատոլի Սերգեյի Մարկովի (Սարգիս Խաչատուրի Մարգարյանի անունը, որի ծնողները Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի Նորատուս գյուղից են): Մոսկվայում լույս տեսած «Герои Советского Союза» երկհատորյակի 2-րդ հատորի 41-րդ էջում հերոսի ազգությունը նշված է «ռուս»:

Կ. Հարությունյանը հերոսների ցուցակում տվել է նաև Վլադիմիր Գրիգորի Տամբիևի (Թամբյան) անունը (Арутюнян, 2004, 68), որը նույնպես ազգությամբ հայ է (Герои Советского Союза. Краткий биографический словарь, 1988, 556):

Ազգությամբ հայեր են եղել նաև Սոկրատ Ալեքսեյի Գալուստաշվիլին (Գալստյան) և Սուրեն Արտեմի (Հարությունի) Ասլամազաշվիլին (Ասլամազյան), բայց Մոսկվայում հրատարակված «Герои Советского Союза» կենսագրական համառոտ բառարանի 1-ին հատորի 309-րդ և 84-րդ էջերում նրանց ազգության դիմաց գրված է վրացի, որը իրականությանը չի համապատասխանում: Կ. Ա. Հարությունյանն իր 2004 թ. հրատարակած «Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945)» ստվարածավալ մենագրության լուսանկարների բաժնում տպել է Վրաստանից բերված մի փաստաթուղթ, որտեղ սևով սպիտակի վրա գրված է, որ Սուրեն Հարությունի Ասլամազաշվիլին ազգությամբ հայ է: Ս. Ա. Գալուստաշվիլու հայ լինելու մասին նշված է 1964 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Գիրք հերոսների մասին» աշխատության 440-442 էջերում:

Կ. Հարությունյանն իր գրքում Խորհրդային Միության հայ հերոսների ցուցակում տվել է նաև Եգեն (Գեղամ) Հակոբի Փիլոսյանի անունը, որը չկար ո՛չ 1964 թ. լույս տեսած «Գիրք հերոսների մասին», ո՛չ էլ 1985 թ. լույս տեսած «Книга о Героях» աշխատություններում: Գումարտակի հրամանատար, ավագ լեյտենանտ Գեղամ Փիլոսյանը ԽՍՀՄ Գերագույն

խորհրդի նախագահության 1945 թ. ապրիլի 28-ի հրամանագրով արժանացել է «Խորհրդային Միության հերոս» կոչմանը Ավստրիայի մայրաքաղաք Վիեննան գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրելու ժամանակ կատարած սխրանքների համար: Սակայն 1949 թ. փետրվարի 2-ին դատվելու պատճառով զրկվել է հերոսի կոչումից: Հաղթանակից հետո նա բնակություն է հաստատել Բաքվի Սաբունզի թաղամասում: Ազերի «բարեկամներին» դուր չի եկել հայ հերոսի խրոխտ կեցվածքը և քրեական գործ են սարքել ու դատել նրան, ինչի պատճառով էլ զրկվել է կոչումից:

Կ. Հարությունյանը Խորհրդային Միության հայ հերոսների ցուցակում ավելացրել է նաև գաղտնի հետախույզ Գևորգ Անդրեյի Վարդանյանի անունը, որը հերոսի կոչման է արժանացել 1984 թ. մայիսի 25-ին: Նա ակտիվորեն մասնակցել է Թեհրանի կոնֆերանսի ժամանակ (25.11-1.12.1943) Իրանում գտնվող գերմանաֆաշիստական դիվերսանտների կողմից ԽՍՀՄ, ԱՄՆ ու Մեծ Բրիտանիայի դաշնակից պետությունների ղեկավարների՝ Ստալինի, Ռուզվելտի ու Չերչիլի դեմ կազմակերպվող մահափորձի բացահայտման և վերացման գործողությանը, այնուհետև կատարել է հետախուզական մի շարք պատասխանատու հանձնարարություններ աշխարհի տարբեր երկրներում:

Հետաքրքիր է, որ 1987 թ. Մոսկվայում լույս տեսած «Герои Советского Союза» գրքի 1-ին հատորի 622-րդ էջում օդաչու Ռաֆաիլ Իվանի Կապրելյանը (Ռաֆայել Հովնանի Գաբրիելյան) նշվել է ազգությամբ ռուս, որը ճիշտ չէ: Նրա հայրը շուշեցի հանրահայտ բժիշկ Հովնան Համբարձումի Գաբրիելյանն է, որի անունով էլ Երևանում հիվանդանոց կա: Մայոր Ռ. Հ. Գաբրիելյանը ակտիվորեն մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել է 89-րդ ավիատրանսպորտային գնդի հրամանատար, պատերազմից հետո դարձել է փորձառու օդաչու, արժանացել վաստակավոր փորձարկող օդաչուի կոչման, 1975 թ. մայիսի 15-ին՝ «Խորհրդային Միության հերոս» կոչմանը Հայրենական մեծ պատերազմում ու հետպատերազմյան տարիներին ուղղաթիռային ավիացիայի նոր տեխնիկայի փորձարկումների ժամանակ կատարած սխրանքների համար:

Մյուս հերոսը, որի անունը չկա ինչպես «Գիրք հերոսների մասին» և «Книга о Героях» աշխատություններում, Դոնի Ռոստովի Մյասնիկյանի շրջանի Չալտիր հայկական գյուղում 1918 թ. ծնված Սուրեն Համբարձումի Տաշչինն (Թաշչյան) է: Սևծովյան նավատորմի ռազմաօդային ուժերի օդաչու, գվարդիայի լեյտենանտ Ս. Հ. Տաշչինը (Թաշչյանը) Հայրենական մեծ պատերազմում 1941 թ. օգոստոսի 19-ից մինչև 1943 թ. սեպտեմբերի 25-ը կատարել է 22 մարտական թռիչք և օդային մարտերում ցած գցել հակառակորդի 11 ինքնաթիռ: Խփած ինքնաթիռներից մեկը վարում էր գերմանական «Հարավ» զորախմբի ռազմաօդային ուժերի հրամանատարը: Խիզախ օդաչուն զոհվել է 1943 թ. սեպտեմբերի 25-ին Կերչի նեղուցի վրա տեղի ունեցած օդային մարտում: Նրան 1995 թ. փետրվարի 16-ին շնորհվել է Ռուսաստանի Դաշնության հերոսի կոչում է շնորհվել: Քանի որ խիզախ հայորդին հերոսությունը կատարել է և զոհվել Հայրենական մեծ պատերազմի օրերին, նրա անունը իրավամբ գրվել է Խորհրդային Միության հայ հերոսների ցուցակում: Կ. Ա. Հարությունյանը նշում է, որ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում գտած մի փաստաթղթում

նշված է եղել, որ օդաչու Ս. Հ. Տաշչիևը (Թաշչյանը) ներկայացված է եղել «Խորհրդային Միության հերոս» կոչման (Арутюнян, 2005, 251-261):

Խորհրդային Միության՝ Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմը Հայաստանում ապրած այլազգի հերոսներ: Կ. Հարությունյանն անդրադարձել է նաև Խորհրդային Միության՝ Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմը Հայաստանում ապրած այլազգի հերոսների թվին: ԽՍՀՄ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում աշխատելու տարիներին նա գտել է 3 նոր հերոսի, որոնք մինչև պատերազմը ծնվել են Հայաստանում կամ մինչև պատերազմը ապրել են ու աշխատել այնտեղ: Ահա այդ հերոսների անունները՝ Կարպ Պետրովիչ Վարֆոլոմեև (ռուս), որը պատերազմից առաջ ապրել և աշխատել է Երևանում, հաղթանակից հետո վերադարձել է Երևան, ապրել, աշխատել ու մահացել է այնտեղ, Կոզլով Վալենտին Գեորգիևիչ (ռուս), որը ծնվել է Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի), Բորիս Ալեքսանդրովիչ Վլադիմիրով, որը նույնպես ծնվել է Ալեքսանդրապոլում, հայրը ռուս էր, մայրը՝ հայ (Арутюнян. 2010, 110-114):

Կ. Հարությունյանի հեղինակած «Խորհրդային Միության հերոս հայաստանցի ռուսները» (1941-1945 թթ.) վերնագրով ռուսերեն մենագրությունում հանգամանալից անդրադարձել է Խորհրդային Միության՝ Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմը Հայաստանում ապրած այլազգի հերոսներին:

Գիրքը հիմնականում շարադրված է Ռուսաստանի Դաշնության ռազմածովային կենտրոնական արխիվի (Լենինգրադի մարզ, քաղաք Գատչինա) և ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի (Մոսկվայի մարզ, քաղաք Պոդոլսկ) նորահայտ ու արժեքավոր փաստաթղթերի, ինչպես նաև համապատասխան գրականության ու մամուլի նյութերի հիման վրա: Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, 8 հերոսների մասին ակնարկներից, եզրակացությունից և գրքի հեղինակի մասին բաժնից:

Առաջաբանում, բացի օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունից, հակիրճ ներկայացվել է Հայաստանի տարածքում ռուսների բնակության, Ռուսաստանում հայերի հաստատման պատմությունը: Հավաստի տվյալներ են բերվում Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին (1941-1945 թթ.) Խորհրդային Հայաստանի տարածքում ապրող ռուսների թվի և ռազմաճակատ զորակոչվածների ու մարտերում զոհվածների վերաբերյալ: Ըստ այդ տվյալների՝ պատերազմի նախօրյակին Խորհրդային Հայաստանի տարածքում ապրել է 51464 ռուս, որոնց 19.63 %-ը՝ 10107 մարդ, զորակոչվել է Կարմիր բանակի շարքեր: Նրանցից 3444-ը (զորակոչվածների 34.07 %-ը) զոհվել է ռազմաճակատում:

Առաջաբանում ճշգրտված է նաև «Խորհրդային Միության հերոս» կոչմանն արժանացած, Հայաստանում ծնված կամ ապրած ու աշխատած ռուսների թիվը: Ըստ հեղինակի՝ «Խորհրդային Միության հերոս» կոչման է արժանացել 8 ռուս, որոնցից 5-ը ծնվել է Խորհրդային Հայաստանում, իսկ 3-ը պատերազմի նախօրյակին ծառայել է Խորհրդային Հայաստանում: Բացի դրանից՝ հեղինակը հիշատակել է նաև 5 ռուս հերոսի անուն, որոնց ընտանիքները պատերազմի ժամանակ ապրել են Խորհրդային Հայաստանում:

Առաջաբանից հետո Կ. Հարությունյանն առանձին-առանձին լուսաբանել է ինչպես Խորհրդային Հայաստանում ծնված 5 հերոսների, այնպես էլ պատերազմի նախօրյակին հանրապետությունում ծառայած մյուս 3 հերոսների կյանքն ու գործունեությունը:

«Փառքի շքանշանի» լրիվ ասպետ հայերի մասին իրենց համանուն աշխատության մեջ, ինչպես արդեն նշեն ենք, պատմական գիտությունների դոկտորներ Հովիկ Մելիքսեթյանն ու

Մարատ Սահակյանը նրանց թիվը նշել են 27, իսկ Կլիմենտ Հարությունյանը՝ 26: Առաջին հեղինակները Պյոտր Ստեպանի Օսկոնյանին համարում են հայ, այնինչ Կ. Հարությունյանի կողմից Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվում հայտնաբերած պաշտոնական փաստաթղթերում Օսկոնյանի ազգությունը գրված է ռուս: Օսկոնյանի ռուս լինելու մասին նշված է նաև «Փառքի շքանշանի» լրիվ ասպետների մասին Մոսկվայում հրատարակված կենսագրական համառոտ բառարանում (Кавалеры ордена Славы трех степеней. 2000, 420):

Եզրակացություն: Այսպիսով՝ համեմատելով ու վերլուծելով Խորհրդային Միության հայ, Հայաստանում ծնված և ապրած այլազգի հերոսների ու «Փառքի շքանշանի» երեք աստիճանների լրիվ հայ ասպետների թվի հիմնահարցին անդրադարձած հայ պատմաբանների աշխատությունները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ Խորհրդային Միության հերոսների թիվը ընդհանուր առմամբ 106 է, որից 4-ն այդ բարձր կոչմանն է արժանացել 1939-1940 թթ. Խորհրդաֆիննական, 99-ը՝ Խորհրդային Միության 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում, 3-ը՝ հետպատերազմյան տարիներին կատարած սխրանքների համար: Ինչ վերաբերում է Հայաստանում ծնված կամ մինչև պատերազմը Հայաստանում ապրած այլազգի հերոսներին, ապա նրանց թիվը 10-ն է: Վիճելի է մնում «Փառքի շքանշանի» լրիվ ասպետ հայերի թիվը՝ 27 թե 26: Ճիշտը 26-ն է, քանի որ 27 համարողները հստակ որևէ փաստարկ չեն բերել՝ իրենց ասածը հիմնավորելու համար:

Մեր ուսումնասիրության արդյունքները կնպաստեն ճշտելու պատմության դասագրքերում տեղ գտած իրարամերժ կարծիքներն ու թվերը, կօգնեն դպրոցների ու ռազմական համալսարանի դասախոսներին մատաղ սերնդին գիտական ճիշտ տվյալներ հաղորդելու հարցում, ինչը, մեր կարծիքով, ավելի կնպաստի նրանց ռազմահայրենասիրական դաստիարակության կարևոր գործին:

Գրականության ցանկ

Աղայան Ծ., Խալեյան Ե. (1960), Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, Երրորդ պրակ, Երևան, Հայկ. ՍՍՌ ԳԱ հրատ, էջ 309:

Բարսեղյան Խ. (1975), Հայրենական մեծ պատերազմի սովետահայ պատմագրությունը, Երևան, ՀՍՀ ԳԱ հաս. գիտ. ինֆորմացիայի սեկտորի տպագրություն, էջ 7:

Գիրք հերոսների մասին **(1964),** Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 363-366, 440-442:

Հայոց պատմություն **(2015),** հ. 3, գ. 2, Երևան, «Զանգակ» հրատ., էջ 493:

Հարությունյան Գ. (2002), Խորհրդային Միության հայ հերոսների և Փառքի շքանշանի լրիվ ասպետների հիմնահարցը հայ պատմագրության մեջ, Երևան, «Զանգակ» հրատ., 95 էջ:

Հարությունյան Կ. (2017), Սյունիքի զավակների մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941-1945), Երևան, «Զանգակ» հրատ., էջ 7-8:

Մելիքսեթյան Հ. (1982), Սահակյան Մ., Փառքի շքանշանի հայ ասպետները, Երևան, «Հայաստան» հրատ, 120 էջ:

Մնացականյան Ա. (1975), Միասնական շարքերում, Երևան, «Հայաստան» հրատ., 446-450 էջ:

Арутюнян К. (2004), Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван: Изд. «Гитутюн» НАН РА, с. 742.

Арутюнян К. (2004), Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван: Изд. «Гитутюн» НАН РА, с. 748-843

Арутюнян К. (2005), Документы о герое Российской федерации-морском летчике Сурене Ташиеве «Вестник общественных наук» (НАН РА), №2, с. 251-261.

Арутюнян К. (2010), Погосян Г., Вклад армянского народа в Великой Отечественной войне (1941-1945), Ереван: Изд. «Гитутюн» НАН РА, с. 841-849;

Арутюнян К. (2010), Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Ереван: Изд. «Зангак» НАН РА, с.110-114.

Арутюнян К. (2022), Герои Советского Союза: русские из Армении (1941-1945гг.) Ереван: Изд-во «Эдит принт», с. 96+8 рис.

Вторая мировая война. Итоги и уроки **(1985),** М.: Воениздат, с. 212-213.

Герои Советского Союза. Краткий биографический словарь **(1988),** М.: Воениздат., т. 2, с. 556.

Герои Совтского Союза. Историко-статистический очерк **(1984),** М.: Воениздат, с. 245.

Кавалеры ордена Славы трех степеней **(2000),** Краткий биографичесий словарь, М.: Воениздат, 2000, с. 420.

Книга о Героях **(1985),** Ереван: Изд. АН Армянский ССР, с. 6.

Советская Армения в годы Великой Отечественной войны (1941-1945) **(1975),** Сборник документов и материалов, Ереван: Изд. АН Армянский ССР, с. 634-636.

References

Aghayan Ts., Khaleyan E., (1960), Urvagtser Sovetakan Hayastani patmutʻyan, Errord prak, Erewan, Hayk. SSṚ GA hrat, ēj 309: **(in Armenian)**

Aputjunjan K. (2004), Uchastije apmjanskogo napoda v Vjelikoj Otjechjestvjennoj vojnje Sovjetskogo Sojuza (1941-1945), JEpjevan: Izd. «Gitutjun» NAN PA, s. 742. **(in Russian)**

Aputjunjan K. (2004), Uchastije apmjanskogo napoda v Vjelikoj Otjechjestvjennoj vojnje Sovjetskogo Sojuza (1941-1945), JEpjevan: Izd. «Gitutjun» NAN PA, s. 748-843. **(in Russian)**

Aputjunjan K. (2005), Dokumjenty o gjepoje Possijskoj fjedjepacii-mopskom ljetchikje Supjenje Tashijevje «Vjestnik obsh'jestvjennyx nauk» (NAN PA), №2, s. 251-261. **(in Russian)**

Aputjunjan K. (2010), Uchastije apmjanskogo napoda v Vjelikoj Otjechjestvjennoj vojnje Sovjetskogo Sojuza (1941-1945), JEpjevan: Izd. «Zangak» NAN PA, s.110-114. **(in Russian)**

Aputjunjan K. (2022), Gjepoi Sovjetskogo Sojuza: pusskije iz Apmjenii (1941-1945gg.) JEpjevan: Izd-vo «Edit ppint», s. 96+8 pis. **(in Russian)**

Aputjunjan K., Pogosjan G. (2010), Vklad apmjanskogo napoda v Vjelikoj Otjechjestvjennoj vojnje (1941-1945), JEpjevan: Izd. «Gitutjun» NAN PA, s. 841-849. **(in Russian)**

Barseghyan Kh. (1975), Hayrenakan mets paterazmi sovetahay patmagrutʻyunĕ, Erewan, HSH GA has. git. informatsʻiayi sektori tpagrutʻyun, ēj 7: **(in Armenian)**

Girkʻ herosneri masin **(1964),** Erewan, HSSṚ GA hrat., 1964, ēj 363-366, 440-442: **(in Armenian)**

Gjepoi Sovjetskogo Sojuza. Kpatkij biogpafichjeskij slovap' **(1988)** M.: Vojenizdat., t. 2, 1988, s. 556. **(in Russian)**

Gjepoi Sovtskogo Sojuza. Istopiko-statistichjeskij ochjepk **(1984),** M.: Vojenizdat, 1984, s. 245. **(in Russian)**

Harutʻyunyan G. (2002), Khorhrdayin Miutʻyan hay herosneri ew Pʻaṛkʻi shkʻanshani lriv aspetneri himnahartsʻĕ hay patmagrutʻyan mej, Erewan, «Zangak» hrat., 95 ēj: **(in Armenian)**

Harutʻyunyan K. (2017), Syunikʻi zavakneri masnaktsʻutʻyunĕ Hayrenakan mets paterazmin (1941-1945), Erewan, «Zangak» hrat., ēj 7-8: **(in Armenian)**

Hayotsʻ patmutʻyun **(2015),** h. 3, g. 2, Erewan, «Zangak» hrat., 2015, ēj 493: **(in Armenian)**

Kavaljepy opdjena Slavy tpjex stjepjenjej (2000), Kpatkij biogpafichjesij slovap', M.: Vojenizdat, s. 420. **(in Russian)**

Kniga o Gjepojax (1985), Jepjevan: Izd. AN Apmjanskij SSP, s. 6. **(in Russian)**

Melikʻsetʻyan H. (1982), Sahakyan M., Pʻaṛkʻi shkʻanshani hay aspetnerĕ, Erewan, «Hayastan» hrat, 120 ēj: **(in Armenian)**

Mnatsʻakanyan A. (1975), Miasnakan sharkʻerum, Erewan, «Hayastan» hrat., 446-450 ēj: **(in Armenian)**

Sovjetskaja Apmjenija v gody Vjelikoj Otjechjestvjennoj vojny (1941-1945) **(1975),** Sbopnik dokumjentov i matjepialov, JEpjevan: Izd. AN Apmjanskij SSP, 1975, s. 634-636. **(in Russian)**

Vtopaja mipovaja vojna. Itogi i upoki **(1985),** M.: Vojenizdat, s. 212-213. **(in Russian)**